

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՉ ՃԻՇՏ ԳՈՐԾԱԾՈՒՄԸ ԱՒ ՇԱՐՔ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄՈՏ

Պատմությունը և աշխարհագրությունը զիտվում են որպես հարակից գիտություններ, այդ իսկ տեսակետից կան շատ հարցեր, որոնք սերտորեն առնչվում են միմյանց հետ, որոնց ճշտումը, ստուգարանությունը անհրաժեշտ են այդ երկու գիտությունների համար:

Մեր այս հոդվածի նպատակն է Ի. Պ. Պետրուշևսկու «Очерки по истории феодальных отношений с Азербайджана и Армении в XVI—начале XIX вв.» աշխատության և մի քանի այլ պատմա-աշխարհագրական աշխատությունների մեջ նկատված այնպիսի տերմինների ճշտումը, որոնք վերաբերում են Արևելյան Հայաստանին կամ Հայկական բարձրավանդակին ընդհանրապես:

Իլյա Պավլովիչ Պետրուշևսկու աշխատանքն անկասկած արժեքավոր գործ է: Նա ռուսումնասիրում է մի կարևոր ժամանակաշրջան (16-րդ դարից մինչև 19-րդ դարի սկիզբը), երբ Արևելյան Հայաստանը և Ադրբեջանը եղել են մի կողմից Սեփեֆյան և Կաջարական ղրինաստիանների, մյուս կողմից թուրք-սամանյանների լծի տակ:

Պրոֆ. Պետրուշևսկին հայտարարում է, որ ինքը գործածելու է «Կովկասյան Հայաստան» տերմինը և դրա տակ հասկանալու է Սովետական Հայաստանի ներկա տերիտորիան և գրում է, որ դա այն տերիտորիան է, որն իր ժամանակին մտել է Երևանի խանության մեջ:

Նախ՝ Կովկասյան Հայաստան հասկացողությունը իր մեջ ընդգրկում է բացի Սովետական Հայաստանի ներկա տերիտորիայից, այլևս նաև Անդրկովկասի այն մասը, որը Թուրքիայի կողմից բռնագրավվեց 1918—1920 թ. թ. ընթացքում, այսինքն՝ Սուրմալուի գավառը, Կադզվանը, Ղարսը, Սարիղամիշը և այլն:

Երկրորդ՝ պրոֆ. Պետրուշևսկին գտնում է, որ այդ նույն Սովետական Հայաստանի տերիտորիային համընկնող «Կովկասյան Հայաստան» եղել է Երևանի խանության տերիտորիան: Եթե դա այդպես է, ապա ուր են մնում Երևանի խանության Արաքսի աջափնյա մահալները:

Վերջապես՝ Սովետական Հայաստանի ներկա տերիտորիայի մեջ մտնում են այնպիսի

միավորներ (Շորագյալ, Փամբակ, Լոռի, Շամշադին և այլն), որոնք առնչություն չեն ունեցել Երևանի խանության հետ:

Այսպիսով, գործածել «Կովկասյան Հայաստան» տերմինը և հայտարարել, որ դա համընկնում է Երևանի խանության հետ, ճիշտ չէ:

Ամենից ճիշտը՝ Արևելյան Հայաստան անվանումն է թե՛ աշխարհագրական և թե՛ պատմական տեսակետից, քանի որ նա գրավում է հայկական բարձրավանդակի (պատմականորեն համընկնում է Մեծ Հայքի սահմաններին) Արևելյան մասը և իրավացիորեն Հայկական բարձրավանդակը բաժանվում է երկու մասի՝ Հայկական պարից այն կողմ ընկած մարզերը որպես Արևմտյան Հայաստանի, իսկ այս կողմը՝ Արևելյան Հայաստան:

Իր աշխատության 4-րդ էջում, խոսելով Ադրբեջանի մասին, հեղինակը այն բաժանում է երկու մասի՝ հյուսիսային և հարավային, անվանելով հարավայինը Իրանական Ադրբեջանը: Սակայն Հյուսիսային Ադրբեջանի մեջ մանող շրջանները թվարկելով, նա բաց է թողնում Կյանջայի, Շաքիի, Ղուբայի, Թալիշի և Բաքվի խանությունները:

Պրոֆ. Պետրուշևսկին ճիշտ չի բնորոշում նաև «Թյուրք» հասկացողությունը. «под выражением „тюрки“ мы понимаем всю совокупность племен и народов», գրում է նա իր աշխատության մեջ (էջ 5):

Հայտնի է, որ «Թյուրք» անվան տակ հասկացվում է միայն մի ժողովուրդ, այն է՝ օսմանյան թյուրքերը: Ինչ վերաբերում է թյուրքական լեզվական խմբի մեջ մտնող մյուս ժողովուրդներին, ինչպես, օրինակ, ադրբեջանցիներին, թաթարներին, թուրքմեններին, ռադեկներին, կերգիդներին, յուկուաններին և այլն, սրանց թուրք անվանելը ջուր է լցնում պանթյուրքիզմի ջրաղացին:

Անհրաժեշտ է հիշատակել, որ թյուրքական նացիոնալիստները զիտակցաբար խառնում են «Թյուրք» ազգային հասկացողությունը «Թյուրքական լեզվական խումբ» հասկացողության հետ, օգտագործելով այդ միջոցը պանթյուրքիզմի տարածման համար:

Վերջերս թուրքերեն հրատարակված աշ-

խարհագրական դասագրքերը լի են պանթյուրքերի՝ Օրինակ, Համիդ Սադիկի դասագրքի 106-րդ էջում գրված է «թուրքերը ապրում են ամենուրեք՝ Միջերկրական ծովից մինչև Զինաստան, Սիրիայից մինչև Հնդկաստան և արաբական երկրները»։ Ուշագրավ է, որ դասագրքի հեղինակն ամենից շատ թուրքեր «գտնում է» Սովետական Միությանում, իսկ Թուրքմենական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի բնակիչներին առանց վերապահման թուրքեր է անվանում։

Պետք է ենթադրել, որ հեղինակին հայտնի է ժամանակակից Թուրքիայի կոնստիտուցիայի 88-րդ հոդվածը, որտեղ ասված է, որ «բոլոր քաղաքացիները առանց կրոնի և ժողովուրդների խտրության, հաշվվում են թուրքեր»։

Պարզվում է, որ Թուրքիայում այս սահմանումով չկան ոչ քրդեր, ոչ հայեր, ոչ հույներ, ոչ վրացիներ, ոչ լազեր, ոչ ասորիներ¹։ Վերջապես հենց իր աշխատությունում պրոֆ. Պետրուշևսկին բաղմիկս խոսում է այն երկարամյա պատերազմների մասին, որոնք տեղի են ունեցել կզըլ-բաշներին և թուրքերին միջև։

Լեզվական նույն խմբին պատկանելը չի նույնացնում ժողովուրդներին։ Օրինակ, լատինական լեզվական խմբին են պատկանում իսպանացիք, պորտուգալացիք, իտալացիք, ռումինացիք, որոնք, ինչպես հայտնի է, միանգամայն տարբեր ժողովուրդներ են։

Այնուհետև պրոֆ. Պետրուշևսկին զարգացնում է այն միտքը, որ իր թե՛ Իրանի մայրաքաղաքը Իսպահան տեղափոխելուց հետո 17-րդ դարի սկզբներից արդեն նախագրյալներ են ստեղծվում կզըլ-բաշների պետությունը վերածելու իրանական պետության, որն ավարտվեց միայն 20-րդ դարում (էջ 82)։

Այս մոմենտը, մեր կարծիքով, նույնպես ճիշտ չէ։ Իրանում երկար ժամանակ իշխեց կզըլ-բաշներին, կաջարների գինաստիան (վիրջինա, ինչպես հայտնի է, իշխեց մինչև 1925 թիվը, երբ Ռիզա շահի կողմից այդ գինաստիան փոխարինվեց արդեն իրանական ծագումի գինաստիանի՝ այսինքն փհլիվիների)։ Բայց այդ ժամանակաշրջանում Իրանը կարու մնաց որպես Իրանական պետություն։ Իրանի արքունիքի կամ գինաստիանների փոփոխությունը Իրանի պետությունը չվերացրեց։ Պատմությունից հայտնի է, որ տվյալ

պետության գահը երբեմն երկար ժամանակ այլ ծագում ունեցող գինաստիանի ձեռքում է գտնվել։ Օրինակ կարող են ծառայել Հարսուրուրգներին և Կորուրգներին գինաստիան Ավստրո-Հունգարիայում և Բուլղարիայում։

Մյուս աշխարհագրական անճշտություններից պիտի նշել, որ Շարուրը չի մտնում Սովետական Հայաստանի ներկա տերիտորիայի մեջ (էջ 105)։ Ճիշտ չէ հեղինակը, երբ նշում է, որ Լափսնը և Բարդուշատը գտնվում են Սովետական Հայաստանի ներկա տերիտորիայի հարավ-արևմուտքում, այնինչ պետք է նշված լինի՝ հարավ-արևելքում։ Բարդուշատի կապակցությամբ պիտի նկատի ունենալ միայն Զանգեզուրի մի մասը, որը համընկնում է ներկա Սիսիանի և Գորիսի ռայոնների հետ (էջ 133)։

Անկասկած մեծ միևնույն է նաև այն, որ զրբին չի կցված ոչ մի քարտեզ։ Այդ հնարավորություն կտար և ընթերցողին, և գիրքը օգտագործողին ունենալ լրիվ օրինատացիա այն վարչատերիտորիալ բաժանումներին մասին, որոնք եղել են Իրանում ընդհանրապես, իսկ Ադրբեջանում և Արևելյան Հայաստանում առանձնապես, որոնց մասին խոսվում է աշխատության մեջ։ Այս քարտեզներն ավելի կրթաբարձրներին սույն աշխատության արժեքը, որ կատարել է Ի. Պ. Պետրուշևսկին։

* * *

Այժմ մի քանի խոսք Հայկական բարձրավանդակի մասին։

Հայկական բարձրավանդակը, լինելով Առաջավոր Ասիայի բարձրագույն մասերից մեկը, դասվում է ասիական խոշոր բարձրավանդակների շարքին։

Նա հայ ժողովրդի բնօրրանն է, նրա հետ են կապված հայ ժողովրդի պատմական անցյալի հիմնական գրվագները։

Գտնվելով Առաջավոր Ասիայի լեռնահանգույցում, նա միավորում է այդ հանդույցները, միաժամանակ կապում է Առաջավոր Ասիան և ընդհանրապես Արևելքը Արևմուտքի հետ։ Աշխարհագրական տեսակետից Հայկական բարձրավանդակի բնական սահմանը արևմուտքից Փոքր Ասիա թերակղզու հետ կազմում է Արևմտյան Նփրատը, անցնելով Ակն (Էգին) և Պարբերդ քաղաքներից արևմուտք։ Հարավից սահմանն անցնում է Երվաթավոր կամ Հայկական Տավրոսով, շարունակվելով մինչև Զաքրոշի սիստեմը։

Այս սահմաններում ընկած Հայկական բարձրավանդակը գեոմորֆոլոգիական և աշխարհագրական տեսակետից նաև իր ուրույն

¹ Բերված են „Учительская газета“-ի 1947 թ. հոկտեմբերի 10-ի №-ից։

² „Большевик“ № 7, стр. 45, 1943 г.

բնությամբ և պատմական անցյալով մի ամբողջութիւնն է ներկայացնում:

«Հայկական բարձրամանդակ» հասկացողութիւնը վաղուց ի վեր գործածական է դիտական աշխարհի կողմից: Բոլոր անվանի աշխարհագետներն ու ճանապարհորդները իրենց կլասիկ աշխատութիւններում պահպանել են այդ տերմինը: Նույնը պիտի ասել նաև հանրագիտական բառարանների և աշխարհագրական ձեռնարկների մասին:

Մարքսիզմի կլասիկների մոտ նույնպես պահպանվել է Հայաստան անունը, հաճախ փոխարինվելով «Հայկական բարձրամանդակ» հասկացողութեամբ: Ի դեպ, նրանք երբեք «Հայաստան» հասկացողութիւնը չեն կապել «Անատոլիա» կամ «Փոքր Ասիա» հասկացողութեան հետ: Իժմախտաբար այդպես չեն վարվում վերջին տարիներս հրատարակված շատ հեղինակներ: Վերջինք թեկուզ 1946 թ. Մոսկվայում լույս տեսած Մատվենի աշխատութիւնը, որը նվիրված է Փոքր Ասիա կամ Անատոլիա թերակղզու ֆիզիկո-աշխարհագրական նկարագրութեանը¹ «Անատոլիա» անվան տակ (թուրքերեն «Անադոլու») հեղինակը հասկանում է ամբողջ Ասիական թուրքիան: Նա Անատոլիայի սահմանադրումը տալիս է այնպես, որ նրա արևելյան սահմանը հասցնում է մինչև Արաքսի ափը 44° 40' 7" (1):

Այսպիսով Մատվենը Անատոլիայի հետ է միացնում աշխարհագրական և թե պատմական տեսակետից նրա հետ ոչ մի ընդհանուր բան չունեցող Հայկական Բարձրամանդակը:

Այդ դրքի մասին տպագրված ռեցենզիաներում ևս նշվում են այդ տիպի թերութիւնները²:

Ընդհանուր չէ Հայկական Բարձրամանդակ տերմինը փոխարինել «Արևելյան Անատոլիան» բարձրամանդակ տերմինով, որպիսին սիրով կընդունվեր թուրքական զավթիչների կողմից:

Նույնպիսի մոմենտ դոյութիւնն ունի նաև պրոֆ. Ժուկովսկու աշխատութեան մեջ³:

Ինչ վերաբերում է վերջերս լույս տեսած Բ. Դանցիգի թուրքիային նվիրված աշխատութեանը⁴, նա հորինել է «նոր» անվանում — «Հայ-բրդական բարձրամանդակ»: Ի դեպ պի-

տի ասել, որ Հայկական Բարձրամանդակ և ընդհանրապես Հայաստան հասկացողութիւնը «մոռացութեան է» տրված: Այդ ձևով է վարվել նաև պրոֆ. Վ. Սեմյոնովը իր «Միջին դարերի պատմութիւն»⁵ դասագրքում, որտեղ հեղինակը օսմանյան սուլթանութեան արշավանքների մասին խոսելիս (էջ 393) նշում է Անդրկովկասի երկրների զբաղման մասին և թվում է Քուրդիստանից մինչև Դաղստան երկրները և Հայաստանը բաց է թողնում: Ընչպես հայտնի է, օսմանյան առաջին արշավանքների ժամանակ նրանք զավթում են Հայաստանի հարավ-արևմտյան մասը (Մուշ, Կարին), իսկ հետո հարավ-արևելք և արևելք (Վասպուրական, Ալաշկերտ, Բայազետ): Չենք ասում այն մասին, որ նույն հեղինակը խոսելով թուրքական լծի տակ տառապող ոչ մահմեդական այսպես կոչված «Ռայայի» մասին, թվում է թուրքին, բացի հայերից: Նախ պիտի պարզ լինի մի հանդամանք, որ «Հայկական Բարձրամանդակը» կամ «Հայաստան» անունը այս երկրի պատմական և իսկական անունն է: Եթե այդ երկրի որոշ շրջաններից նրա բնիկները տարագրվել են, դա դեռ իրավունք չի տալիս որևէ կերպ անվանական փոփոխութիւն մտցնելու այդ երկրի նկատմամբ:

Պիտի պարզ լինի, որ այդ տերմինների հիշած փոփոխումը թուրքիայի համար սոսկ աշխարհագրական նշանակութիւն չունի, այլ այն օգտագործվում է նույն նպատակով, ինչի ձգտել են պ. Սարաջօղլու նախորդները՝ Սուլթան Համիդը, էնվերը, Թալեաթը, այն է՝ երկրում ոչ մի հայկական ձեռք չթողնել:

Ընչ վերաբերում է քեմալականներին, ապա նրանք կուգենային, որ հայկական հարցը աշխարհի համար լինել պատմութեան մեջ մոռացված, իրավացիորեն նկատում է պրոֆ. Զավրիևը:

Մատվենը գրում է նաև այն մասին, որ թուրք աշխարհագետները ընդհանուր անուն են տալիս Հայկական Բարձրամանդակին՝ «Արևելյան Յայլաններ» — («Շարք Յայլալարի») և համարում է այդ հեղինակավոր տեսակետ: Մինչդեռ թուրք աշխարհագետների կատարած այդ փոփոխութիւնները Սուլթան Համիդյան տրագիկիաների շարունակութիւնն են և հարկ չկա նրանց գիտական նշանակութիւն վերագրելու:

Անհրաժեշտ է, լուրջ կերպով հետևել հրատարակվող աշխատութիւնների մեջ հիշատակվող տերմինների գիտական ճշտութեանը:

Կ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

¹ Матвеев, Турция, 1946 г., Москва.

² Советская книга, № 3, 1947 г.

³ Жуковский, Земледельческая Турция, стр. 1.

⁴ Данциг, Турция, Москва, 1949 г., стр. 120.

⁵ В. Семенов, История средних веков, Москва, 1949 г.